

ԵՐԵՎԱՆԻ ՏԱՐԻ

# ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլ, կէս տարվանը 6 ռուբլ:

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ:

Օտարաբաղադրացիք գիւժում են ուղղակի  
Тифлис. Редакция „Мшак“

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ  
(Բացի կիրառի և տօն օրերէն):

Յայտարարութիւնները ընդունվում են ամէն շաբաթ:

Յայտարարութիւնները համար վճարում են  
իրաքանչիւր բառին 2 կօպէկ

## ԲՈՎԱՆԵՆԱԿՈՒԹԻՒՆ

Ներքին տեսութիւնը Նամակ Երևանից, Նամակ Կոնստանդնուպոլիսից, Ներքին լուրերը— Արտատեսութիւնը, Գերմանիայի, Անգլիայի, Ռուսիայի, Արտաքին լուրերը, Նամակ Թիֆլիսից, Արտաքին լուրերը, «Մշակի» հեռագիրները: Յայտարարութիւնները: Տեղեկացոյց:

## ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

### ՆԱՄԱԿ ԵՐԵՎԱՆԻՑ

18 մայիս

Երևանի հոգևոր գործընդհանուր շարժումը արդիւններէն մինչև Նորագաւթնի գիւղի սուրբ Գեորգ եկեղեցու ուխտատեղիի արդիւնքն է: Չտակարար յետոյ մինչև հինգերորդ կիրակին եկած արդիւնքը մտնում է դպրոցի գանձարանը: Այդ ընձայաբերութիւնը Վեհափառ հորիցն է, և ոչ թէ սկզբից սահմանված մի հաստատ արդիւնք: Գոյացած արդիւնքի վրա հակելու համար իւրաքանչիւր կիրակի մի օր առաջ սուրբկվում են ուսուցիչներէն երկուսը, որոնք հակող հայե տեսնող ու նոյն եկեղեցու քահանային ու երեցփոխանին ապահովարով յանձնող: Չորրորդ կիրակիէ կարգը իմ և իմ ընկեր Ս. ինչ էր: Կարգ ասելով չը պէտք է հասկանալ իբրև պարտաւորեցող: ոչ, այլ կամաւ, որովհետև ազգային գործ էր: ուստի այն անգամն էլ մենք յանձնառու եղանք գնալու: Հասանք Նորագաւթնի, յանձնեցինք պաշտօնաթուղթը գիւղի քահանային: Գեւա մէկ ժամ էր մնացել մինչև գանձարանի դարձելը և որովհետև իմ առաջին անգամ գանձվին էր այդտեղ ցոյց տուց ինձ ընկերս այն միւս ուխտատեղին, որին տեղացիք սուրբ Նշանու էին անուանում (կամ սուրբ կիրակի): Փոքրիկ պարտիւղ մէջ մի հասարակ ցած յարկանի ծածկված տուն էր, սեղանի ձախակողմում մի գերեզման որի վրա բաղձացրած էր սուրբ Գեորգի պատկերը, ընկերս խորհուրդ տուց ինձ որ ես այդ տեղի արդիւնքները վրա հակեմ, իսկ ինքը եկեղեցու գերեզմանին: Ես մտածայնութիւնով Այդ արդարեւ արեւելամական խորհուրդ էր նրա կողմը, որովհետև գերեզմանը մի նոյն խորանի մէջ ընկած, ծածկված մատուցով իսկ և իսկ հակողի համար մի բանտ էր: իսկ իմ տեղը յարժարութիւն ունէր, մտածում էր որ երեւմտապէս կարող էր դուրս գալ և ազատ օդ ծծել: Այդ երեկոյ իհարկէ մեր ծառայութիւնը շատ թեթեւ էր, շատ ուխտատու չը գտնվելու համար: Առխուստորները մեծ մասամբ յերմանից ու շրջակայ գիւղերից են ժողովվում: Առաւօտեան մենք վաղ դարձեցանք և գնացինք մեր տեղերը գանձարանին ու վարած մոմերին հակելու: Ես նկատեցի, որ գիւղացիները աւելի շերմուտանք էին, քան թէ քաղաքացիները, որոնք գուցէ ժամանակ անցկացնելու էին եկեղ: Գիւղական ընտանիքը շատ ազատ ու վտանգ էր շարժում այդ միջրիկ տաճարի մէջ: Պատճառը համարեկուց յետոյ ձեռք ձեռքի տուած շարժում էին պատերի ասիկ ամեն մէկը մի մի գանձի կամ քարի կտոր ձեռքն առած խորհրդաւոր կերպով, շըթութեանը դողողացնելով: կայցում էին քարերը պատերին: Նա շատ ուրախ էր դուրս թեչում տաճարից, որի քարը կայցում էր պատին, ինչ նա որ քարը մի քանի անգամ փորձելուց յետոյ չէր կայցում, ախար, յուսանաւ երեսով ու թուլացած դուրս էր դուրսում: Առաւօտեան թեւան արժանի էր գիւղացի ուխտատուրը: Նա հիացած քաղաքացու չորերի վրա, մտնում էր, ձեռքերով չօտարում էր, հարցնում, ժպտում ու բարձր ձայնով կանչում: «Եյ դագո, դագո, մե կար պառ: ըլիլ ինչ խորտ կտորի միւսը պատանակից գտնում էր: «Եյ Ետեր դագո, ըլիլ տն իմարտ: չարացում էր: Նուպար, Նուպար, իմ քարը կպառ:» Երրորդ երեսը խաչակնքելով աչքերը ուղղած սուրբ պատկերին առում էր «Եյ սրվումս մուս սուրբ կիրակի, թէ որ լաճս կա:

զատուի էդ խեւանդութեանն իս էնի քարս կը կպիւր:» Ես նայում էի այս ամենի վրա շատ հետաքրքրական աչքերով: Քաղաքացին շատ անգամ մտի, կաթած տեղերի վրա էր կայցում իր քարը: Մինչև ժամ 12-ը դադարեց գանձարանը գրամը: Գոյացած արդիւնքը եղաւ 20 ռուբլ: Այնպէս որ եթէ հաշուել ընկերս այս հինգ կիրակիները արդիւնքը միջին թուով 100-ի է հասնում, հանելով ծանապարհածախսը, մնում է 70 ռուբլ: Տեղական ժողովուրդը համարեայ բողոքովն գիւղի էր նմանում: այդ նրանից է որ օդը և ջուրը շատ վատ ապագորութիւն է անում խեղձերի վրա: Բրնձի—չալթուկի արտերը, որոնց միջի գորտերի ահագին կուկուցը ամբողջ գիւղեր քուտա էր խանգարում վնասում են ընտելչեւերին: Բացի այդ պատճառ էին տեղացիք որ ամառ ժամանակ անկարելի է մի քանի քաղցր աչք կայցել մոծակների սաստիկ խայթելուց: Առհասարակ մարդիկ, գանայք, աղվիւնք, երեւանցու են: Այդ նրանից է որ նրանց գործերը տեղը դաշտի մէջ զեխած, վիթած, հոտած շալթուկները մէջն է միշտ: Արանց խմած ջուրը որ ամեն մի ապահանջութիւն լցուած Չանգուկցն է համարեա խեղձերին հալ ու կենդանութիւնը զրկել է: Ես լսեցի որ քանիսներէն որ իւր գիւղացիք խնդրել են ներկայացնելու Վեհափառին այդ ուխտատեղի արդիւնքը կըրկին յետ լսելու մեր դպրոցից, իրանց ուսումնարանին սեփականացնելու: Ինչպէր չէր սրահումն է, թէ հոգեւոր դպրոցը այսպիսի ուխտատեղիների արդիւնքով ինչ պէտք է չափի: մանաւանդ այն որ հոգաբարձուները կամենում են այս տարի նոր նոր ուսուցիչներ բերել տան: Եթէ արդիւնքը թէ այս ուսուցիչները բերել տան: հարցնում ենք արդե՞ք կարող են նարանակ մի քանի տարի այդ ուսուցիչներին ամենապակասը — 600—800—1000-ով վարձատրել: Իմ կարծիքով այդ մի տարուց աւելի չի տեղ, որովհետև դպրոցը չունի այնքան միջոց: Հոգաբարձուներէն ոչ ոք թող չը գանգատվի որովհետև նրանք որքան էլ աշխատում են, որ դպրոցի միջոցը մի ապահով վիճակի մէջ դնեն, կատարելապէս չեն աշողվում: Եթէ դիտում են Վեհափառին, անսպասելի մանր մանր արդիւնքներով բաւականացրած է յետ դարձում: Եթէ համեմատելու լինենք մեր դպրոցի այժմեան նիւթական գրութիւնը արդի հոգաբարձութիւնը և տեսչութիւնը գործող ուժերի հետ, շատ մեծ գանապանութիւն կը տեսնենք: Այդպիսիները իրաւունքի ներքոյ կթէ լինէր մի ապահովված դպրոց՝ աւելի կը գործէին և դպրոցը շատ շուտ կը հասնէր իր նպատակին: Իսկ ինչ որ մնում է այժմեան ուսուցիչները գործունէութեանը, չը պէտք է ուրանալ, որ նրանք խղճմտանքով են պարապում:

## ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Շուշի, 15 մայիս

Մանուկների համար գրատուն ստեղծվում է կամ մնում էմ հասկացնել մի այնպիսի գրավաճառանոց, որ գտնվում ընթերցանելի բազմաթիւ ընտրելով գրքեր մանուկների համար: Վերջին մի քանի տասնակ տարիներում հայերի մէջ ամեն տեղ համարեա ուսումնական ուսումնարանի վրա բացվեցաւ և այսօր գրեթէ ամեն մի հայ գիւղում ու քաղաքում մենք կը գտնենք հայոց դպրոց: Այդ դպրոցների չնորհիւ մեր ազգը այսօր, եթէ ունի մի քանի հազար նոր կարգացողներ, դրանց մեծ մասը 10-ից 18 տարեկան երիտասարդներ են: Բայց եթէ մեր ունեցած հայ գրատուններում 10-ից մինչև 15, 20 տարեկան ուսանողների համար հայերեն, բացի մի քանի դասագրքերից, ուրիշ օգտակար ընթերցանելի գրքեր որոնենք—չառ քիչ, շատ սակաւ կը գտնենք, այն էլ խիստ թանկ ու կրակ գնով: Իսկ եթէ հարկւրներով գտնվեն գրաբառ հին գրքեր

ու աշխարհաբան նոր թարգմանութիւններ և այլ մեծատար պատմութիւններ—սրանք մանուկներին անմատչելի գրքեր են: Արդէն հաւատարեցած եմ, որ ընթերցող ինքը հակամում է թէ ինչ կը նշանակի ամանական գրքեր, նա հասկանում է նոյնպէս թէ այսօր գիտնական աշխարհը որպիսի մեծ նշանակութիւն է տալիս և հոգացողութիւն է անում այս խիստ ծանր և քնքալ հարցին: Չանդան մարդիկ և նոյն լոկ ուսումնական ընկերութիւններ նուիրված են այս սրբազան գործին: Բայց այդ մեղանում իսպառանդալոր է թողնված: Մեր մէջ գաղտնի դուրս գալով ընդհանուր է աշակերտի ընթերցանութիւնը: Տանը մենք չենք հանդիսում, բայց փութած գրքերից, ընտրած մանական գրքեր: Այս կարիքի համար մինչև այսօր մեր հայերն ու հասակաւոր եղբայրները գլուխ չեն դրել: Բայց այս նրանց պարտականութիւնն է: Եթէ, սուրբ, գիւղին՝ յայտնի է թէ որքան մեծապար մեծ մանուկներ մանուկներ համար, բայց և այնպէս այդ մեծապար բաների վրա աւելի են ուշադրութիւն դարձնում մեր հայերը անպակաս անելու իրանց գաւակներից, քան թէ ընթերցանելի գրքերի վրա: Հաստատ խմանալով թէ անցած դարերի գագափարով ապրող ծնողներին դժուար կը լինէր հասկացնել, որ նրանք հիմնադր լինէին մանկական դատան, ես իմ ընկերներին հետ նուիրել եմ ինձ այդ նպատակին ծառայելու և այդ օրից ուսանողութեան ընթացքում մենք մեծ ուշադրութիւն ենք դարձնում հին լեզուների վրա, որոնց միջնորդութեամբ էլ հասած կը լինենք մեր նպատակին: Մենք մանկական վէպեր ու կրթիչ գրքեր ընտրելով միտք ունենք մի քանի տասնակ գրքեր հրատարակել իւրաքանչիւրը 5-ից 10 կօպէկ: Այդ մտքով անս մտ օրերս Բլան շարի մանկական վէպից պ. Գր. Պապիանի խմբագրութեամբ «Սարի—Հովիւ» գրուածքը թարգմանելով ուղարկելուց քաղաքից մտ, որ և շատ շուտ ժամանակում լոյս կը տեսնի: Սա մեր առաջին փորձը կը լինի, որ և կուղարկվի ձեր քննադատութեանը: Մեծապատիւ տէր, յայտնելով ձեզ այս մտադրութիւնը, մենք կարծում ենք, նա կարծանաւայնաե ձեր համակրութեան, որ կը լինի ինձ և իմ ընկերներին խրատոյս: Յոյս ունենք նաև ձեր լրագրի ընթերցողներէն շատերի, մանաւանդ մեր հասակակից պարոնների վրա, սա կունենայ քաղցր ապագորութիւն և արձագանք կը տայ նաև նրանց հետեւելու մեր օրինակին: Կ. Կրասիլնիկեան

## ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ՍՂՆԱՂԻՑ մեզ գրում են. «Այստեղ սկսվում է տարածվել կարմրուկ անուանված հիւանդութիւնը, բայց դեռ խաղաղութեամբ է անցնում, ուստից մեծաներ պատճառելու: Այստեղի պօլիցիան իւրաքանչիւր թաղից մարդիկ է ընտրել, որոնք պէտք է շրջեն փողոցները և անմաքորութիւնները հեռացնել տան: Սքնացի կանանց այս տարի արեւելված է օճաւ երկը:» ԷՐԶՐՈՒՄԻՑ հարողում են «Тифл. Вѣстн.» լրագրին հետեւելով: «Այստեղից անդադար հեռացնում են հիւանդներին: Մայիսի 14-ին 1000-ից աւելի հիւանդներ այստեղ չը կային: Տեղի հիւանդների թիւը սաստիկ պակասել է, վերջին ժամանակներումս պատահած տեղի հիւանդութեան տեսակները շատ թեթեւ են:» ՍՂՆԱՂԻՑ մեզ հարողում են, որ այդ քաղաքի շրջակայ գիւղերին հեղեղից հասած վնասը հասնում է ոչ թէ 100 ր., ինչպէս սխալմամբ սպված էր «Մշակի» մէջ, այլ 1000 ռուբլի: «Тифл. Вѣстн.» հարողում է, որ այդ լրագրի խմբագիր, իշխան Կ. Բեհրուժով, որ դատ-

վում էր երեք տարեկան գործերի համար, արդարացաւ կարավարչական Սենատում: Թիֆլիսի օրիորդաց ուսումնարաններից մէկի մեր ծանօթ վարժուհին ցանկանում է ամառային արձակուրդների ժամանակ մասնաւոր դասեր տալ: Հասցէն կարելի է իմանալ «Մշակի» խմբագրատանը: Խմբագրութեան մէջ պտայցեցաւ 1 ռուբլ պ. Միք. Ղարախանեանից յօդուս վան քաղաքում հիմնվող Արարատեան վարժարանի: ԱՐԳՎԻՆԻՑ գրում են հետեւելով «Голос» լրագրին. «Ռուսաց գործերը մտան Արգվին (որ գտնվում է Արգանանի և Բաթումի մէջտեղ, Բաթումից 25 կիլոմէտր հեռու): Թէպէս քաղաքի մերձակներում բանակ դրած թիւրքաց գործերը կատարեալ անտարբերութիւն ցոյց տվեցին երբ տեսան ուսաց գործերի դալը, այնուամենայնիւ թիւրքաց առաջապահ գործերը թիւրքատրութեան ոչ մէկ հրաման ստացած չը լինելով Դէրվիշ-փաշայից ցոյց տվեցին որ կը դիմարեն ուսաց առաջապահ գնդի անցնելուն: Արգանանի գորտաժնի հրամանատար գեներալ Կօմարով հասնելով ամեն արգելքներ դիւրացնոց և վաղիկավկասի և Պետտիգորսկի գորագնդերից հինգ վաշտ (բատալիօն) յաղթական հանդէսով մտան Արգվին, ուրախութեան աղաղակներով ընդունվելով տեղացի բազմաթիւ հայերից: Թագաւոր կայսրը շնորհեց Ա. Գեորգի չորրորդ կարգի պատանաւանդ պ. զը Կուրսիին որ ֆրանսիական բանակի հեծելազօրքի գեներալ է և մասնակից է եղած 1877-ի հոկտեմբերի 23-ին Դէվլե-բոյնում եղած պատերազմին: Ֆրանսիացի զինւորական պաշտօնատարների մէջ պ. Կուրսիին միայն ստացած է այդ պատանաւանդը:» ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

## ԳԵՐՄԱՆԻԱ

Վիլհելմ կայսրի կեանքի գեմ եղած բաւաճանութիւնը այն հետեւանք ունեցաւ որ մամուլը աղատութիւնը և սօցիալական ընկերութիւնները զսպելու համար հետեւեալ օրէնքի ծրարքը առաջարկվեցաւ պարլամենտին: 1. Իսշակից Ժողովը կարող է արգելել այն հրատարակութիւնները և ընկերութիւնները որ սօցիալական ուսման վարժարան (դեմոկրատիա) նպատակների համար աշխատում են: Պէտք է որ այդ արգելքը հրատարակվի և հաղորդվի Բէխտաւային, կամ անմիջապէս և կամ, եթէ իր նիստերը դադարած են նորից բացվելու առաջին օրը: Բէխտաւայը կարող է հրամայել որ այդ արգելքը յետ առնվի: 2. Տեղական ոստիկանութիւնը կարող է ժամանակաւորապէս արգելել տպագրված տետրակների տարածվելը հասարակայնի տեղերում, փողոցներում և հրատարակներում երբ այդ հրատարակութիւնները եղած են առաջին յօդուածում որոշված նպատակների համեմատ քաղաքային տարածելու համար: Արգելքը կը դադարի եթէ դաշակից Ժողովը չորս շաբաթվայ պայմանաժամում չի արգելի այդ գրուածքը Ա. յօդուածի համեմատ: 3. Տեղական ոստիկանութիւնը (պօլիցիան) կարող է արգելել մի Ժողովի հաւաքվելը կամ լուծել մի Ժողով նրա բացվելուց յետոյ, երբ այնպիսի իրողութիւններ կան որոնք հաստատանում են թէ այդ գուճարումը կրած է Ա. յօդուածում որոշված նպատակների ծառայելու համար միայն: 4. Ա. և Բ. յօդուածներում որոշված արգելքների հակառակ գրքեր տարածողը կը պատվի բանասիրութեամբ: Ոստիկանու-

Թիւնը կարող է այդպիսի գրովածները արդիւնք առանց դատաստանական իշխանութեան հրամանի (Տես 1874 թ.ի մայիսի 4-ի տպագրական օրէնքի 23-րդ յօդուածը):

5. Ա. յօդուածում արգելված մի ընկերութեան կամ 3-րդ յօդուածում արգելված մի ժողովի մասնակցութիւնը կը պատժվի բանտարկութեամբ: Նոյն պատժը կը գործադրվի եթէ մէկը չի կամենայ իսկոյն հեռանալ կը մի ժողովի լուծվելու հրաման արվել 3-րդ յօդուածի համեմատ: Գոյն երեք ամիս բանտարկութեամբ կը պատժվեն նրանք որոնք այդպիսի ընկերութեան պարագլուխ են, ինչպէս նաև այդպիսի ժողով կազմողները և նրանց վերատեսուչները և արգելված մի ժողովի հաւաքված տեղի տէրը:

6. Այն անձը որ կամ խօսքով կամ գրութիւններով աշխատում է խանդավառ հաստատված օրէնքների կամ բարոյականութեան կարգաւորութիւնը, տարածելով Ա. յօդուածում արգելված նպատակները, կը պատժվի գոնէ երեք ամիս բանտարկելով:

7. Ներկայ օրէնքը գործադրելի է երեք տարվայ համար: Մէկից մինչև հինգերորդ յօդուածը անմիջապէս կը գործադրվեն:

Այս ծրագրերը, ինչպէս երևում է, բաւականին սահմանափակած լինելով Վերստիայի արդէն ունեցած, տպագրական ազատութիւնը, շատ կողմերից դժգոհութեան ձայներ են լսվում: Այդ ձայները նաև պարլամենտում արձագանք գտնելով, մինիստրների խորհրդին առաջարկած այդ օրէնքի ծրագրերը մերժվել է պարլամենտից ձայների բազմութեամբ:

**ԱՆԳՂԻՍ**

Լանկաշերի մշակների վէճը օրից օր աւելի սաստկանում է, թէպէտ սկզբից լրագրողները յոյս յայտնած էին թէ շուտով կը վերջանայ խաղաղութեամբ: Գործատերերի ընկերութեան մասնաժողովը մշակների պատգամաւորների հետ ժողով ունեցաւ, բայց երկար խորհրդակցելուց յետոյ չը կարողացան համաձայնել: Լանկաշերում կոտոր գործարանատերերի մասնաժողովը էլ որի նախագահն է պ. Ջակոն, ոտայնանկների ընկերութեան պատասխանից թէ իր արդէն արած որոշումները չի փոփոխի: Մշակները վերջին ծայր դրագրեցան, որովհետև իրանց թշուառութիւնն էլ վերջին ծայր է հասել: Մշակների ընտանիքները ստրտափելի չքաւորութեան մէջ են: Ար. քայքայածութիւնը սիրում է, այնտեղ ոչ խոհանութիւն և ոչ բնակարանութիւն կարող չէ սպիտակութիւն ունենայ: Բակրիւնի մէջ երբ ինչպէս են թէ գործատերերը արհամարհանքով մերժել են իրանց առաջարկված համաձայնութեան պայմանները, մշակների բազմութիւնը յուսահատված, ոտի է կանգնել: Սոսկալը դուռում ներով թնդալու են փողոցները, անէճքներ տալով գնդապետ Ջակոնին որ վերջոյնեալ ընկերութեան ժողովին նախագահած և մերժած էր մշակների առաջարկութիւնը որոնք ուզում էին շարժական չորս օր աշխատել իրանց վարձքից հարեւրին 10 զեղծութիւնով, և կամ հինգ օր աշխատել հարեւրին 5 միայն զեղծութիւնով: Երկուսն էլ ժամին մշակները սխալ են հաւաքվել: Բէլ յետոյ Գարվէնից մարդեր և կանայքն էլ հասնելով, մեծ բազմութիւն լցվել է փողոցներում: Այն ժամին, կինը և մարդեր սխալ են ստակալը դուռում ներով քարիճել գործարաններից մի քանիսը և մէկ րօպէի մէջ կոտորտել են նրանց բոլոր պատուհանները: Յետոյ գնացել են զէպի Ջակոնի տունը որին բաւականին մեծ վնաս տուել և դիմել են զէպի ծայրորդ գործարանը որ քանդել են Այն տեղից անց են կացել զէպի պ. Նորմերի տունը որ բոլորովին կործանել և Նորմերի վերաբերել են երկու տեղից: պարտիզ ծառերը և ծաղիկներն անցամ կոտորտել են Այն ժամանակ

ամբոխի կատաղութիւնը աւելի գրգռված, վերաբարձել է զէպի գնդապետ Ջակոնի կողմը: Ջակոն լսելով նրանց վերաբարձքը, տան ետևի կողմից փախել է և թաղ է կացել մի բարեկամի տան: Իր տունը այրել են և երբ այդ ահագին շէքը ամբողջ այրվել, վերջացել է, Ջակոնի կառքը յաղթանակով քաշել տարել են, նրա մէջ Ջակոնի տեղ մի երկար և նեղ կողով գնելով շորերով ծածկված: Ստրտանութիւնը աւելորդ է համարել իր միջամտութիւնը, որովհետև 100 կամ 200 ստրտան ինչ կարող էին անել այդ ահագին բազմութեան դէմ: Իրան հրամաններ են տրվել, կառավարութիւնը հրատարակել է թէ պատերազմական օրէնքը կը գործադրվի Լանկաշերի համար: Վարկում են որ նոր յղարկութեաններ կը լինեն: Շատ գիւղերում ուր գործարաններ են գտնվում, մշակները ժողովներ են կազմում: Գործատերերը որոշել են չը խնայել մշակների բանտարկեան առջև: Ասում են թէ լոյս Կերբի կը միջամտի մշակներին և գործատերերին վէճին և երկու կողմն էլ կընդունեն նրա միջնորդութիւնը:

**ԹԻՒՐԿԻԱ**

Նիկոմիդիայէն մեզ հաղորդուած հետեւեալ զէպքը բաւական է ցոյց տալ թէ, գաւառական օտ. իշխանութիւնները սակաւին ինչքան հետի են օտ. Սահմանադրութեան հրամայած օտան օտանցի՝ օրինաց առջև հաւատար են: Ի սկզբունքը ձանձախ, և թէ գաւառաց մէջ նոսրիսն աչառու և ապօրինաւոր վարչական ընթացքը կը շարունակէ դեռ: Ահաւասիկ զէպքը:

Ատարազարցի հայ մը, Մհի. Յարութիւն անուն, որոյ ասկից 8 տոնոյ չափ առաջ 2 ձին չէրքէզներէն յափշտակուէր էր, կրնանայ այս օրերս թէ իր այդ ձիերէն մին Նիկոմիդիա այս ինչ Աղային ածուխ փոխադրող ձիոցը խմբին (խաթար) մէջը կը գտնուի, իսկոյն Նվառ կը գայ իր ձին աւելու, կըր միւս ձին ալ ուրիշ մէկուն քովը կը գտնուի: Բայց երբ չը յաջողի աւելու կը դիմէ կառավարութեան, որն որ վկայ կը պահանջէ այդ ձիերն իրն ըլլալուն, իսկ երբ վկայներն ալ կը ներկայանան գատարանը, հայ ըլլալուն համար չեն ընդունուիր, այլ կը պահանջուի որ օմիւսներն վկայներ բերէ, ուստի ձիերուն տէրը կը ստիպուի հետեւեալ օրը Ատարազար մեկնիլ օմիւսներն շահանալու ծարիւր:

Շատ տեղեր շատ զեղծութիւններ ու ապօրինաւորութիւններ կը լինեն, իսկ այս քերթատանայ կամ մահմեդական վկայից խորհուրդութեանը չափ մեծ և պայթակերելի զեղծում մը չը կայ որ կայ ու կը շարունակէ դեռ: Թուրքիոյ մէջ: Մէկ կողմէն քորոր Օսմանցիք հաւասար են օրինաց առջև կը պօսան, միւս կողմէն քերթատան վկայութիւնը չը բանուիր, միւս կողմէն բեր իրան Մարդ չէ քերթատանց, հաւատք չունի, իրից չունի, բարոյական չունի, որ տուած վկայութիւնը չը բանուի, չէ նէ մի ամեն հաւատք, ամեն իրից, ամեն պարկեշտութիւն և ամեն օրինաւորութիւն միայն մահմեդականներն քովը կը գտնուի: Այս կը հետեւի քերթատանի և Նսլամին մէջ գեռ շարունակուած խորութիւնէն:

Ասկից զատ, ընդունելիք պահ մը թէ Երիւթի գատարաններ իսլամէն զատ ուրիշ վկայ չեն ընդունուիր, բայց այդ կողմերը Նիւզուրի գատարաններ չը կան, և ինչու հայու և տաճիկ մէջ եղած դատերը Նիւզուրի չը յղելով Երիւթին կը յանձնեն, կրօնական ատեաններուն աննկողութիւնը անիրաւ մարդոց սպաստան ընձայելով:

(Լրագիր)

**ԱՂՍ-ԿԱԼԷԻ ԳՐԱՆԵԼԸ**

Կրողները հաղորդում են հետեւեալ տեղեկութիւնները Աղս-Կալէ կղզու գրաւելու

մասին: Այսօր մայիսի 25-ին թիւրքաց զօրքերը մարտիցին Աղս-Կալէ կղզին և յանձնեցին աւստրիական զօրքերին: Այսօր առաւօտ հասաւ Սրշովա 73-րդ հետեակ զունց թիւնստիւնով և առաջապահ զօրքերով Սուկլիվէշի հրամանատարութեան սակ: Այս զօրքերի միայն մի մասը եկաւ շոքեաւերով, որովհետև Սրշովայի հետագիրը հաղորդում է, որ աւստրիական զօրքերը գրաւեցին այն չէզոք երկիրը, որ գտնվում է Գունայ գետի ձախ ափի վրա Բուսիլայի և Աւստրիայի սահմանների մէջ: Թիւրքաց 600 մարդ զօրքերը մի գնդապետի հրամանատարութեան տակ ուղարկվեցան Բանիա: Աղս-Կալէ կղզին շին-Սրշովայից հինգ կիլոմետր հեռու է գտնվում: Նրա ամրոցները շատ հին են, և կառուցված են 1717—1739 թ. և չեն համապատասխանում զինուորական արհեստի ներկայ պահանջներին: Երբ սկսվեց անցնող տարվայ պատերազմը Աղս-Կալէ կղզին գրաւեցին 850 մարդ թիւրքաց զօրքեր 20 թիւնստիւնստիւնով: Այդ թիւնստիւնները և միւս պատերազմական զօրծիքները թիւրքերը երեւի ստեղծեցին աւստրիացոց զօրքերին: Բայց զօրքերից կղզու վրա 300 քնակներ կան, մեծ մասամբ մահմեդականներ: Աւստրիական զօրքերը երկար ժամանակ կը մնան Աղս-Կալէ կղզու վրա:

**ՆԱՍՄԱԿ ԹԻՒՐԿԻԱՅԻՑ**

Կ. Պոլիս, 11 մայիս 78

Նախորդ նամակովս յայտնած եմ որ Կարեզին վ. Սրուանձտանց կ. Պոլիս ուղարկվեցաւ Հայաստան: Նա Փոքր-Հայաստանէն սկսելով, Սեբաստիա, Խարբեր, Տիւրքմենիկ, Բուրդուստան, Բաղէշ, Մուշ և այլն այլտի պլուտաի և երկայ վան ուր կը մնայ:

Կլիկիայի կողմէն սաստիկ հարստահարութեանց լուրեր կը հասնին: Կարծես թէ թիւրք կառավարութիւնն իր վերջին ճիգ կը թափէ, քանի որ ժամանակ և միջոց ունի դեռ, սաստիկ հարստահար տալ հայոց ազգին: Ներսէս պատրիարք բողոքներ է նախագահ պաշտօնեայ Սահի-Փաշային և բաւական ծանր խօսքեր խօսեր են իրարու:

Մայիս 8 երկուշաբթի օր մի մեծ յուզում սկսաւ Կ. Պոլիս մէջ. տրամվէյներն (ձիաբարչ երկաթուղի) մինչև Բէշիկտաշ երթալով կը դադարէին այնտեղ և չէին անցնել Օրթալու: Երբ վէճ նստողներուն վրա կը խուզարկէին որ զէնք չունենան: Երբ զէնք կ'ընէին, Օրթալուի բարձունքներին վրա, ուր կը բնակի սուլթանը, պաշարուած էր զինուորներէ: Չարախի մօտ, նախկին սուլթան Մուրատ Կ. պապան ալ պաշարուած էր ժողովուրդէ և զօրքերէ: Ժողովուրդին մէջ մեծ անստուգութիւն կը տիրէր. թէպէտ ցերեկ էր, բայց այդ կողմերու հետ հաղորդակցութիւնը դադարած լինելով, չէինք գիտեր թէ ինչ կը լինի: Հարակոյս չէր մնացած թէ այդ շարժումի նպատակն էր զահրանել անկ սուլթանի Համիդը և կայսր հրատարակել սուլթան Մուրադը. բայց զանազան լուրեր կը հասնէին, ոմանք կասէին թէ սուլթան Մուրադ սպանուած է, ուրիշներ թէ սուլթան Համիդ սպանուած է. ոմանք կասէին թէ Համիդը կը յայր Բաշիկ Էֆէնդիսի պիտի հրատարակեն կայսր, ուրիշներ ալ թէ Արգու-Ալիով որդին Իւսուֆ Նուզուրի Էֆէնդիսին: Այս զանազան լուրերու մէջ կատարեալ անստուգութիւն կը տիրէր. ժողովուրդը վրդովված էր: Ստամբուլի կողմը ամեն մարդ սարսափած, խանութները կը փակէին և կը փախէին: Խաների (քարվանսարայ) դուռները կողպեցին, վայնալով որ թիւրքաց կողմէն յափշտակութիւն և քրիստոնէից կոտորած կը լինի: Ճիշդ այնպէս եղաւ, ինչպէս որ երկու տարի յառաջ մի օր լուր տարածուելով շուկային մէջ թէ սօփտայներն ոտք ելած են և պիտի կոտորեն քրիստոնէայներն, ամեն մարդ վախցած սկսան փախչել: Միայն թէ այս անգամ իրենք ալ չը դիտէին թէ ինչ անեն. ոմանք կասէին թէ ուսաները բռնի կը մանեն Կ. Պոլիս. ուրիշներ ալ թէ մահմեդական զաղթականները ոտք ելած են և պիտի կոտորեն քրիստոնէայներն, և այլն: Բայց Ղալաթայի կողմը բուրդուն տարբեր դրուածք մէջ էր. մինչդեռ քաղաքական մի այսպէսի մեծ զէպք պատահելու լուրը կը

լսուէր, զալաթայիցներ անկողով կեցած էին իրր թէ մի սովորական բան լինի (և համարիտ, մի մեր աչքեր վարժուեցան այդպիսի քաղաքական փոփոխութիւններու): ամեն մարդ իր գործով, իր աւետարով զբաղած էր, մինչդեռ սուլթանի թիւնստայներ և նախարարներ իւրեանց ձիերով և կառքերով արագընթաց կերթեկէին, Ղալաթիս այնպէս անտարբեր էր, ինչպէս չէր եղած թերևս մինչև անգամ սաղարազանի փոփոխութեան օր: Երեկոյն Ղալաթիսէն շոգեաւաւով Արնաուու գիւղ գնացած ժամանակ, տեսնաւ որ Չրաղանի պալատին առջև երկու գրասար նաւեր իւրեանց ծախ թողած և սպառնալից կեցած են. պալատին ծովաճախաց կողմը պաշարուած է բազմաթիւ ժողովներով: Բողոքի շոգեաւաներ թիւնստիւններով կեցած են պալատին առջև:

Հետեւեալ առաւօտ լրագրողներու մէջ պաշտօնական յայտարարութիւն կարգապէս և իմացակցաւ բուն եղելութիւնը օր հետեւեալն է:

Ալի-Սուլթան անուն յղարկութիւնը մի քանի գաւառիցներն հետ խաբելով հարիւրաւոր մահմեդական զաղթականներ, իւր հետ տարեր և յարձակեր և Չրաղանի պալատին վրայ ուր գրեթէ բանտարկված էր սուլթան Մուրադ. ուզեր է կայսր հրատարակել զայն. բայց պահապաններ զիմարեր և երկուց կէօշիկ զօրքեր օգնութեան հասնելով. կոխը սատակացեր, գաւառաններէն մի քանին, շատ զաղթականներ և Ալի-Սուլթանի սպանուած են: Ալի-Սուլթան ծանօթ մարդ է. Արգու-Ալիով և Ալի-Փաշայի ժամանակ Կ. Պոլիսէն աքաղուած է, կամ աւելի ճիշդ, փախստական է եղած իւր յեղափոխական գաղափարներու և գրութեանց համար. կրկար ժամանակ Եւրոպա մնացած է իբրև աքաղաղ: Արգու-Ալիով զահրանելի լինել յետոյ վերադարձած է Կ. Պոլիս և պալատին մէջ պաշտօն ստացած, բայց իւր գրութիւնները լրագրաց մէջ, իւր քարոզները Այս-Սոփիայի միկիլին մէջ իւր դատախօսութիւնները Ղալաթա-Սեբասի լիւսին մէջ պատճառ եղած են որ ամեն մարդու համարում պահասած է իւր վրայէն և մի գատարկաստ իրօպա պաղափարն անցնած են իւր վրայ: Եւ համարիտ, այդ անձը որ երկուստար Թիւրքիայի կուսակցութեան պարագլուխներն են, մի մի մտեւանց թիւրք էր, քրիստոնէից լինումի: Երբ Ղալաթա-Սեբասի համալրարանին տեսուչ եղաւ, իւր առաջին գործն եղաւ իրաւագիտութեան ուսումը զաղարկողները զանազան պատրուակներով, որովհետև իրաւագիտութիւն ստանալը բոլոր աշակերտները քրիստոնէայ էին, մեծ մասամբ հայեր, որոնց այնչափ աշխատութիւն պարագլուխաց և այսօր կը թափաւին: Շատեր կային որ միայն մի տարի մնացած էր որ իւրեանց ուսման ընթացքը աւարտելով վկայագիր ստանային: Ահա այսպէս է թիւրքաց ուսումնասիրական գործ. կամ լաւ եւ, հայոց վրայ ցոյց տուած համակրութիւն:

Տակաւին չէ յայտնուած թէ Ալի-Սուլթանին ինչպիսի ծրագրերն (պլան) պատրաստուելով, ձեռնարկած է այդ գործին: Գուցէ ինք կը յոսար որ ժողովուրդի զգոհութիւնն վերջին ծայր հասած լինելով, երբ յանդգնի սուլթան Մուրադ կայսր հրատարակել: Ժող վարդն ալ իբրև կը հետևի, նախարարներն ալ գոհ կը լինեն եթէ յաջողի: Բայց ի հարկէ իմարութիւն էր ցերեկ ժամանակ մի քանի մարդերով միայն երկու սուլթան զահրանել անկ սուլթան Համիդը լաւ ամբացած էր և պաշտպանված բազմաթիւ զօրքերով:

Այդ օրէն սկսած, կառավարութիւնը կայսրապետ շուտով հեռացանել մահմեդական զաղթականները Կ. Պոլիսէն. այսօր մի մեծ շոգեաւա զարձակ կը մեկնի Կ. Պոլիսէն, զաղթականներով լցուած: Սուլթան Համիդ իւր մօտ տարաւ իւր մեծ եղբայր սուլթան Մուրադը և աչքին առջև կը պահէ զայն. իսկ Մուրադի մայրն բանտարկեցին Թօփգալուի պալատին մէջ: Այդ է վերջաւ որ սուլթան Մուրադ մահմեդից չէր այս դաւաճանութեան. և երբ դաւաճաններ պալատին առջև եկել են, կարծեր է թէ զինք սպաննել կկամ են և սպաննելիքներ է արել պատուհանէն զայս Գաւառաններ փեցցել սուլթան Մուրադի վրայ են, պալատական կիներ ստուգողի մէջ ինկան, գոռուած, չլիթութիւն և լացի սպառակներ սկսեր են: Յարձակող զաղթականներ տեսնել են այն տեղ մի պատկառելի վեհ զէպքով մարդ և խնդրի հրացաններն գետին ձգելով երկազաբութիւն տարեր են երեւի վրա ինկած, կարծելով թէ Մուրադն է զաւ. բայց խեղճը որ պաշտօտի խեղճարոյց (խորթընթի) Օհան ազան էր, չը վախէր թէ ինչ անէ. կը յայտնէ թէ ինք Մուրադը չէ. այն ժամանակ հրացաններն կողովն իւր վրա և կը

պահանջներն որ իրենց առաջնորդէ սուլթան Մուրադի մօտ. զօրքեր հասնելով հազի կողմանէն Օսման ազան որ իր կեանքի մէջ մի քանի րօպէ թիւրքաց սուլթան եղաւ: Գաղթականներուն մէջ շատեր կան եղբոր որոնք կը կարծեն թէ պատիւ պիտի ունենան սուլթան Համիդին ներկայանալ. երբէք չին յուսար եղբոր որ մի նոր սուլթան հրատարակելու համար կը տարուին դէպի պալատ:

Այս այսպիսի խառնաշփոթ վիճակի մէջ եմք. ամեն օր երկիւզ կայ. մի օր լուր կը տարածուի թէ սուլթան Կ. Պօլիս կը մտնեն. մի ուրիշ օր այսպիսի դէպքեր կը պատահին:

Նամակա վերջացուցած ժամանակ Բ. Կուռը կայրի. կրակը հանգրին. Բ. Կրան մի մասը միայն այրեցաւ:

2.

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

— Լօնդոնից հաղորդում են մայիսի 22-ին հետեւեալը. «Standart» լրագիրը գրում է թէ զօրքերը անկանոն դրութեան մէջ լինելով Կ. Պօլիսում, անդրական նաւատորմը որ գտնվում է Իզմիրում, հաւանական է որ դէպի Կ. Պօլիս առաջանայ և մտնի իշխանների կողմէն:

— Կ. Պօլիսի մայիսի 21-ին հաղորդում են եւրօպական լրագիրներին թէ դանդաղ կերպով մաքրում են Շուվլայի և Վառնայի մէջ մասը: Արիւնաւարտից գրված նամակներ յայտնում են թէ Արքա գետակի չրջականերում մի քանի անգամ կռիւ է եղել ուսմաների և Ռօզօպան ապստամբների մէջ: Ռուսները տիրել են ապստամբների ամրացած դիրքերին: Ապստամբներից շատերը սպանվել են, շատերն էլ գերի են եղել:

— Հասօրի պապը հեռագրով ուրախութիւն է յայտնել Վիլհելմ կայսրին որ անվաս ազատվեցաւ Հէօլէի հարուածից: «Univers» լրագիրը ասում է թէ պապը այդ առիթով Վիլհելմ կայսրին ուղարկել է մի կնիգակ սրի մէջ սաստիկ գատապարտում է սօցիալականութիւնը:

— «Agence Russe» լրագիրը գրում է թէ «Ռուսըրովին իրաւացի է հաւատալ թէ պատերազմի հրատարակվելուց չա՛հ ապստոյների և Ռուսաստանի ու Անգլիայի համաձայնութիւնը արգելել աշխատողները շանքերը արգրելուն կը մնան: Կ. Պօլիսի և Բերլինից եկած վերջին լուրերը, ինչպէս նաև կոնգրէսի շուտով հաւաքվելուն վերաբերեալ լուրերը հաստատում են մեր ասածը»:

— Բուկարէշտից հաղորդում են մայիսի 22-ին հետեւեալը. «Այսօր կատարում են Բուկարէշտի անկախութեան հրատարակվելու և կարլ իշխանի դահալալութեան տարեգրքի հանդէսը: Ամեն աները զարգարված են դրօշակներով: Իշխանը այցելութիւն արաւ կալաֆաղի. Վիլհելմի և Սմարանի պատերազմական դաշտին: Վիլհելմում ընդունվեցաւ ռուս զօրքի կողմից մեծ պատուով: Հուզուրականները իրան ներկայացրին աղ և հաց և հորհակալութիւն յայտնեցին որ Բուկարէշտի գործակիցը ռուսաց զօրքաբանակին: Իշխանը կը վերադառնայ Բուկարէշտ երեք կամ չորս օրից յետոյ: Իշխան Լօրանով ապահովացրել է սուլթանին թէ Սան Ստեֆանոյի զօրքերին դէպի առաջ յարժուած առողջապահական պատճառներով է եղած և թէ Ռուսաստանի զգացումները և դիտարկութիւնները խաղաղասիրական են»:

— «Times» լրագիրը գրում է թէ Ռուսաստանի և Անգլիայի մէջ համաձայնութիւն կայացած է որ ռուսներին Բուկարէշտում մնալու պայմանաւորը կարճանայ, զօրքերի թիւը պակասի և իշխանութեան կազմակերպութիւնը եւրօպական մասնաժողովի յանձնարի փոխանակ ռուսաց մասնաժողովին:

— Կ. Պօլիսից հաղորդում են մայիսի 21-ին թէ 5,000 գաղթականներ պատգամատրութիւն են ուղարկել Բ. Կուռը և օգնութիւն են խնդրել: Բ. Կուռը խոստացել է կանոնադրական ուժերի տալ նրանց:

— Բերլինից հաղորդում են լրագիրներին, որ կայսր Վիլհելմի վերջերը երեսի, ձեռքերի և մէջքի վրա են: Վերջերը պատճառել են մանր և խոշոր հոտորակները, ջարդարձի անունը նօրեկից է, յանցանքը գործիւց յետոյ, նա կամենում էր իրան սպանել: Երբ մտան յանցանորի սենեակը, նա բեփփվելով վիրաւորից տան տիրջը: Քաղաքի բնակիչները ստոտիկ վրդոված են, կայսրի վերջերից բուական գնդակներ են հանել, նորա մարմնի մէջ մտել է 30 գնդակներ զանազան մեծութիւններ:

— «Polit. Corresp.» լրագիրն հաղորդում են

Բուկարէշտից հետեւեալը. «Բուկարէշտի սենատի փոխ-նախագահ Բրատիանօ ուղերովից Կ. Պօլիս մասնաւոր յանձնարարութեամբ, որ տուել է նրան բրիտանական հիւպատոսութեան զօրքերի կառավարիչ պ. Ռայնստ: Ասում են այդ յանձնարարութեան նպատակն է խնդրել Բ. Կուռը, որ նա Բուկարէշտի անկախութեանը համաձայնի: Միւս անգլիկութիւններից երևում է, որ Բուկարէշտի յայտնի նպատակների համար կամենում է մտնել Ռուսիային:

— Լօնդոնից հաղորդում են ռուսաց լրագիրներին, որ «Observer» լրագրի տեղեկութեանը նայելով Ռուսաստանի և Աւստրիայի մէջ եղած բանակցութիւնները նորից սկսվել են, Ռուսաստանը պատրաստ է ընդունել Աւստրիայի առաջարկութիւնները մեծ մասը:

— Բերլինից հաղորդում են, որ մայիսի 20-ին հասել է այդ քաղաքը Պարսից: Շահը և իջել է պալատում:

— Լրագիրները հաղորդում են, որ մասնաւորական ապստամբները սպառնում են Ֆիլիպպոսի և Սօֆիայի մէջ եղած ճանապարհին: Ապստամբութիւնը ճնշելու համար ռուսները մտադիր են բուկարէշտի նոր զուգորդ կազմել:

— «Polit. Corresp.» լրագիրն հաղորդում են հետեւեալը. «Մի քանի օր առաջ թիւրքաց մայրաքաղաքը հասան Վարնա և Շուվա ամրոցների զօրքերից 13 բաժանում, որոնք նշանակված են Կ. Պօլիսը պաշտպանող զօրքերը զօրեղացնելու համար: Վարնայի հրամանատարը երկար ժամանակ չէր համաձայնում ուղարկել իր զօրքերը, մինչև սուլթանից ուղարկի հրաման ստացաւ: Բուկարէշտի Կ. Պօլիսը պաշտպանող զօրքերի 4-րդ բաժնի հրամանատար է նշանակված:

— «Presse» լրագիրն հաղորդում են, որ Ռուս-միլիտարի ապստամբները խնդրել են ռուսաց զինուորներից զինազարուծվել: Կոնգրէսի տեղադրութեան ժամանակը: Այս խնդրերը մերժվեց: Գերմանիայի 8օտերները կօնգրէսի նիստերի ժամանակ կերթայ Արիւնաւարտ փոքր ժամանակամիջոցով:

ՄԵՆԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԵՆԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

10հոկտեմ, 23 մայիսի (4 յունիսի): Բիկոնսֆիլը ուղերովում է դէպի Բերլին յունիսի 7-ին (մայիսի 26-ին), իսկ Սալեբուրի յունիսի 10-ին (մայիսի 29-ին): Անգլիական նաւատորմի և ռուսաց զօրքերի Կ. Պօլիս մօտից միաժամանակ հեռացնելու դիտարկութիւնը յետաձգված է մինչև կօնգրէսի կայանումը:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 24 մայիսի: Պետական բանկի 5% տոմսեր առաջին շրջանի արժէ 97 ռ. 87 կ., երկրորդ 95 ռ. 62 կ., երրորդ 95 ռ. 62 կ., չորրորդ 95 ռ. 62 կ., ներքին առաջին 5% փոխառութիւնը 227 ռ., երկրորդ 231 ռ. 50 կօպ., արեւելեան 94 ռ. 75 կ., ոսկին 8 ռ. 5 կ.: Ռուսաց 1 ռուբլ. Լօնդոնի վրա արժէ 24, 75 պէնս, ռուսաց 100 ռուբլ. Բերլինի վրա արժէ 210 մարկ 25 ֆէն., Փարիզի վրա 259 ֆր. 75 սանտիմ: Բօրսայի տրամադրութիւնը ամուր է: Ամերիկայի կէրօսին արժէ 375:

ՎԻԵՆՆԱ, 21 մայիսի (2 յունիսի): Անգլաբարական դէպքագիտի նիստում Անգրաշի յայտնեց որ ստացել է ձիւղ տեղեկութիւն, որ կօնգրէսը գումարվելու է յունիսի 11-ին: Անգրաշի աւելացրեց, որ «Globe» լրագրից հաղորդված լուրը անպաւտաստական համաձայնութեան կետերի մասին ստացել է:

ԲԵՐԼԻՆ, 21 մայիսի (2 յունիսի): Պարսից Շահը այսօր ուղերովիցաւ դէպի Փարիզ:

10հոկտեմ, 25 մայիսի (6 յունիսի): Ռուսաստանը և Անգլիան համաձայնագրան մինչև կօնգրէսի կայանումը չը հեռացնել Կ. Պօլիսի իրանց զինուորական ոյժերը, աչքի առաջ ունենով որ թիւրքերը ձգտում են թշնամութիւններ յարուցանելու:

ԲԵՐԼԻՆ, 25 մայիսի (6 յունիսի): Գերմանական թագաժառանգին յանձնված է կայսրութեան գործերի կառավարելը: Կայսրի առողջութիւնը լաւանում է: Յաւեր չէ զգում:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, մայիսի 26-ին: Շուվալով և Ուլբրի հասան Ս. Պետերբուրգ:

10հոկտեմ, 26 մայիսի (7 յունիսի): Լօրգրերի խորհրդարանում մարիզ Սալեբուրի ասեց՝ «Այսօր խնդրել պէտք է ներկայացնել կօնգրէսի քննութեանը: Պետութիւնները ցանկանում են արդար կերպով վերաբերվել դէպի այդ խնդրը և Անգլիան էլ կամենում է այդ: ԲԵՐԼԻՆ, 26 մայիսի (7 յունիսի): Կայսր Վիլհելմի առողջութիւնը անշարժ դրութեան մէջ է:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, մայիսի 25-ին: Պետական բանկի 5% տոմսեր առաջին շրջանի արժէ 97 ռ. 75 կ., երկրորդ 95 ռ. 75 կ., երրորդ 95 ռ. 50 կ., չորրորդ 95 ռ. 75 կ., ոսկի 8 ռ. 13 կ.: Տրամադրութիւնը թոյլ է: ԲԵՐԼԻՆ, 25 մայիսի (6 յունիսի): Սուում են որ գերմանական դաշնակցական խորհրդի մէջ մտցրած է առաջարկութիւնը արձակել գերմանական պարլամենտը:

Կ. ՊՈԼԻՍ, 25 մայիսի (6 յունիսի): Մուլթար-փաշայի տեղ նշանակված է արաբիզ-լիայի զինաւորը Բեռլին-Փաշան:

ԲԵՐԼԻՆ, 25 մայիսի (6 յունիսի): Իշխանի հրամանով սերբիական ազգային-ժողովը (արկուպչէնա) գումարվելու է Կրագօէվացի մէջ յունիսի 16-ին:

ԲՈՒԿԱՐԵՍ, 25 մայիսի (6 յունիսի): Ռուս-միլիտարի ազգային ժողովը նստում Գիկա ասեց՝ Բուկարէշտի ցանկանում է պահել Բէ-սարաբան, ինչ միջոցներով կը լինի և չը նախելով ամեն անակ ապստամբներին:

ԲԵՐԼԻՆ, 25 մայիսի (6 յունիսի): Գօրաւկօյ Շուվալով և Ուլբրի սպասվում են այստեղ յունիսի 11-ին:

ԲԵՐԼԻՆ, 26 մայիսի (7 յունիսի): Գերմանական միլիտարութիւնը զբաղված է մշակելով նոր կանոններ, որոնք պէտք է գործ դրվեն տերութիւնից հասարակութեան կարգի և ապահովութեան համար:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 27 մայիսի: Պետական բանկի 5% տոմսեր առաջին շրջանի արժէ 98<sup>3</sup>/<sub>8</sub> ռ. երկրորդ 95<sup>3</sup>/<sub>8</sub> ռ. երրորդ 95<sup>3</sup>/<sub>8</sub> ռ. չորրորդ 95 ռ. 50 կ., ներքին առաջին 5% փոխառութեան տոմսեր արժէ 235 ռ. 75 կ., երկրորդ 229 ռ. 50 կ., արեւելեան 94 ռ. 75 կ., ոսկի 8 ռ. 14 կ.: Ռուսաց մի ռուբլ. Լօնդոնի վրա արժէ 24<sup>15</sup>/<sub>32</sub> պէնս, ռուսաց 100 ռուբլ. Գերմանիայի վրա արժէ 208 մարկ 50 ֆէն., Փարիզի վրա 257 ֆր. 50 սանտիմ: Տրամադրութիւնը սկզբից թոյլ է, վերջը ամբանում է:

ԲԵՐԼԻՆ, 26 մայիսի (7 յունիսի): Վիլհելմը իր հօր մահվան օրվայ յիշատակի ազդեցութեան տակ տխուր է տրամադրված: Սաստիկացող թուրքութիւն երևաց:

ՎԻԵՆՆԱ, 26 մայիսի (7 յունիսի): «Pol. Corresp.» լրագիրը հաղորդում է, որ յունիսի կառավարութիւնը յոյս ունէ, որ նրան թոյլ կը տրվի մասնակցել կօնգրէսին: Արտաքին գործերի մինիստր Գլեյխման ուղերովից Բերլին, որտեղ կը մնայ կօնգրէսի տեղադրութեան ժամանակ: Կրիտեան ապստամբները թուով 5300 յարձակվեցին թիւրքերի վրա Կարլսբի մօտ և ստիպեցին նրանց յետ քաշվել դէպի ծովեզրայ քաղաքները: Այս յաղթութեան պատճառով Կանդիոսները վճռեցին շարունակել կռիւը մինչև աջողի միանալ Յունաստանի հետ: Թիւրքաց միլիտարները խորհուրդը վճռեց դատարկել Ռուսաստանի համար Շուվա ամրոցը: Վարնա մնում է թիւրքաց զօրքերի ձեռքին:

ԲԵՐԼԻՆ, 8 մայիսի (28 յունիսի): Այսօր քննվում էր ութ անձանց վերաբերեալ դատաստանական գործը Մեծութեան անպատեութեան համար Նօբելիցի գործի հետ միասին: Նրիւք պատասարտված են բանտարկուցութեան հինգ տարով, մէկը չորս տարով, երկուսը երկու և կէս տարով, մէկը մէկ ու կէս տարով, մէկի գործը յետաձգված է վիսնրին հարցնելու համար: Կայսրական պար-

լամենաի արձակելը անկասկածելի է համարվում:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 28 մայիսի: «Голосъ» լրագրին հեռագրում են Վիեննայից հետեւեալը. «Այսօր լրագիրները հաղորդում են, որ կառավարութիւնը կարգադրեց կազմակերպել բոլոր նաւատորմը: Կառավարական շրջաններում կարծաւոր հերքում են այս լուրի ճշշմարտութիւնը: Այստեղ կարծում են, որ կօնգրէսի նիստերը կրկնապէս չեն լինի: Նրիւք պետութիւնների լիազօր ներկայացուցիչները կը համաձայնվեն միմեանց հետ ընդհանուր հայեացքների մէջ, նորա կը հիմնեն մասնաւոր միջազգային յանձնաժողով: Հակառակ դէպքում անհամաձայնութիւնները պէտք է առաջին նիստերից երևանայ: Հաւատարմութիւն են, որ Ռուսաստանի և Անգլիայի միմեանց մտնելու չունի այնպիսի վճռողական նշանակութիւն, որ, ինչպէս ասում էին, իբր թէ պատճառ եղաւ Բիկոնսֆիլի կօնգրէսին ներկայանալուն: Սուում են, որ կօնգրէսի նիստը կը բացվի նրանով, որ Գերմանիայի ներկայացուցիչը կը կարգաւ Սան Ստեֆանօի հաշտութեան ամբողջ բանագրերը: Յունաստանի շահերը պաշտպանելու համար դարձեալ սկսվեցին աշխատանքներ, մի և նոյն ժամանակ Աւստրիան նոյնպէս բանակցում է Սերբիայի հետ: Գերմանիայի Ֆրիլիպօ Չեմլինում գտնված զօրքերի զինքը առիթ բերելով, մի քանի անգամ այցելեց սերբիական իշխան Միլանին, մետրօպօլիտ Միլայեկին և սերբիական շատ միլիտարներին: Բիտոյից ուղերովից Բերլին, հասաւ Վիեննա, որտեղ կը մնայ մի քանի օր:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 28 մայիսի: «Правит. Вѣстн.» լրագիրը հաղորդում է հետեւեալը. «Նորին Մեծութիւն Կայսրուհին հիւան լացաւ տեղային դրութեամբ, որին միւս օրը աւելացաւ պեղվայի բորբոքում: Բոլոր այդ ժամանակը տաքութիւնը կանգնած էր տեղային ամենաբարձր թւերի վրա: Գիշերները անքուն էին անցնում, ցերեկը քունը յաղթում էր: Թէպէտ նորին Մեծութեան շնչառութիւնը այժմ աւելի ազատ է, բայց անդը շարունակվում է և ոյժիկը թուլացան: Ոտորագրած է Լէյբ-բիշօփ Բօսկին:

ԲԵՐԼԻՆ, 27 մայիսի (8 յունիսի): Կայսրի առողջութիւնը դարձեալ լաւացաւ:

ՎԻԵՆՆԱ, 27 մայիսի (8 յունիսի): «Polit. Corresp.» լրագրին հեռագրում են. «Սան Ստեֆանօում պատերազմական խորհրդի նիստ կարգված է եւսնելով գործել Բօրօպի սարերում ապստամբված պօստիների դէմ և գործ դնել խիտ միջոցներ Բօրօսոս նահանգի քրիստոնեաների դէմ: Ի նիստի առնելով նրանց գործած բռնութիւնները տեղական մահաբանականների վրա: Բ. Կուռը հրաժարվեց նշանակել Սալեի-փաշային առաջին լիազօր ներկայացուցիչ կօնգրէսում: Նորա փոխարէն նշանակված է Կարլսթօրօրի, որին ստուած է փաշայութիւն, երկրորդ ներկայացուցիչը Մահմէդ-Ալի-փաշան է նշանակված:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 29 մայիսի: «Правит. Вѣстн.» լրագրում մայիսի 28-ին տպված է. «Նորին Մեծութիւն Կայսրուհին անցկացրեց գիշեր երեկվանից աւելի հանդիսա կերպով: Առաւօտը տաքութիւնը պակասեց նախկին օրերի հետ համեմատած, շնչառութիւնը աւելի խոր է և այնքան յաճախ չէ: Լէյբ-բիշօփ Բօսկին»:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, մայիսի 29-ին: «Голосъ» լրագիրը հաղորդում է որ Շուվալով և Ուլբրի երկի ուղերովիցաւ դէպի Բերլին: Սուում են որ թիւրքաց հայերի պատգամաւոր, արքեպիսկոպոս Նօբել Նարբէյ, նոյնպէս ուղերովում է դէպի Բերլին, որտեղ կը մնայ կօնգրէսի տեղադրութեան ամբողջ ժամանակ: Նա յոյս ունի որ մեծ պետութիւնների ներկայացուցիչները ուշադիր կը լինեն դէպի թիւրքաց հայերի կատարելագուս օրինաւոր ցանկութիւնները:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, մայիսի 29-ին: «Голосъ» լրագիրը հաղորդում է որ Շուվալով և Ուլբրի երկի ուղերովիցաւ դէպի Բերլին: Սուում են որ թիւրքաց հայերի պատգամաւոր, արքեպիսկոպոս Նօբել Նարբէյ, նոյնպէս ուղերովում է դէպի Բերլին, որտեղ կը մնայ կօնգրէսի տեղադրութեան ամբողջ ժամանակ: Նա յոյս ունի որ մեծ պետութիւնների ներկայացուցիչները ուշադիր կը լինեն դէպի թիւրքաց հայերի կատարելագուս օրինաւոր ցանկութիւնները:

